

Պ-1156-26.09.2025-SՀ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19.6-րդ հոդվածի 15-րդ մասում «29-ապատիկի» բառը փոխարինել «45-ապատիկի» բառով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը եւ դրա գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո լիցենզիա ստանալու նպատակով ներկայացվող հայտերի մասով ծագած հարաբերությունների վրա:

*Առաջին ընթերցում
Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ*

Պ-1156-26.09.2025-SՀ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19.6-րդ հոդվածի 15-րդ մասում «29-ապատիկի» բառը փոխարինել «~~55~~45-ապատիկի» բառով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը եւ դրա գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո լիցենզիա ստանալու նպատակով ներկայացվող հայտերի մասով ծագած հարաբերությունների նկատմամբ վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1156-26.09.2025-SՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «55-ապատիկի» բառը փոխարինվել է «45-ապատիկի» բառով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Իրանում ամրանների արտադրության պրոցեսում միայն գազի, էլեկտրաէներգիայի ծախսի և աշխատավարձի տարբերությունը Հայաստանում նմանատիպ արտադրական պրոցեսի համեմատ, կազմում է 33 հազար դրամ 1 տոննայի համար: Հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ԵԱՏՄ անդամ պետությունների և Իրանի միջև ազատ առևտրի շրջանակներում սահմանվել է ամրանների ներմուծման 0% մաքսատուրք, ինչը նախկինում կազմում էր 5 % (շուրջ 10 000) դրամ, դրա հետ մեկտեղ, որպես հետևանք, այդ մասով նվազել է վճարվող ԱԱՀ-ի չափը նույնպես (ինչը կազմում էր շուրջ 2000 դրամ): Հետևաբար, վերը նշված բաղադրիչները ձևավորում են շուրջ 45 հազար դրամի տարբերություն 1 տոննայի հաշվարկով (ինչը հնարավորություն է ընձեռում ներմուծողին նվազեցնել ներմուծված ամրանների վաճառքի գինը): Հարկ է նշել, որ նախագծով ներկայացված 55000 դրամ տուրքի չափի հաշվարկում ներառված է եղել նաև Իրանական արժույթի արժեզրկումը շուրջ 15-19 տոկոսով, որը կազմում է մոտ 10000 դրամ: Սակայն կարծում ենք, որ արժեզրկման գործոնը	Ընդունվել է:	Ընդունվել է:

			փոփոխական է և այն հաշվի առնել նպատակահարմար չէ, ուստի պետք է առաջնորդվել ազդող հիմնական բաղադրիչներով, որոնց ազդեցությամբ արժեքի տարբերությունը կազմում է 45000 դրամ:		
2.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածում «տարածվում է» բառերը փոխարինվել է «դրա գործողությունը տարածվում է» բառերով, իսկ «նկատմամբ» բառը՝ «վրա» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:	Ընդունվել է:	Ընդունվել է: